ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐԱ ԱԼՖՐԵԴԻ ՍԱԴՈՅԱՆ

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ (ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Ը.00.02. «Տնտեսություն, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2015

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի
ճարտարապետության և շինարարության պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝	տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր ԱՇՈՏ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՄԱՐԿՈՍՅԱՆ
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր ԷԴՈՒԱՐԴ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ ՕՐԴՅԱՆ
	տնտեսագիտության թեկնածու ՆՈՐԱՅՐ ՍԱՄՎԵԼԻ ԲԱԲԱՅԱՆ
Առաջատար կազմակերպություն՝	ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015թ. դեկտեմբերի 4-ին, ժամը 15:00-ին

Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի տնտեսագիտության թիվ 015 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0009, ք. Երևան, Խ. Աբովյան 52:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015թ. նոյեմբերի 3-ին:

015 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
տեխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝ Ա. Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

<u>Ատենախոսության թեմայի արդիականությունը:</u> XXI դարի առաջին տասնամյակում հատկապես մարդկային կապիտալի աճի կարևորությունը և քաղաքների մրցունակությունը ու դրա մակարդակի բարձրացումը դարձել են տնտեսության զարգացման տարածքային ասպեկտների հիմնական թեմաները: Քաղաքակիրթ աշխարհում գրեթե համընդհանուր կարծիք է, որ տարածքների (գլոբալ) մրցունակությունը, առանձնապես խոշոր քաղաքներում խաղում է նշանակալից դեր երկրի սոցիալ-տնտեսական կայուն դինամիկայի ձևավորման գործում, ինչը պայմանավորված է արդի տնտեսության մեջ մարդկային որակյալ ռեսուրսների հստակ նշանակությամբ և դերակատարմամբ: Քաղաքի մրցունակությունը հիմնականում կախված է տվյալ քաղաքի ներդրումային գրավչությունից, ինչպես նաև այն նախադրյալներից և ներուժից, որը նա ապահովում է, իսկ վերջիններիս իրագործման մեխանիզմները կյանքի կոչելու համար անհրաժեշտ են «ստեղծագործ» գաղափարներ:

Հայաստանի Հանրապետությունը անկախություն ձեռք բերելուց հետո սկսեց ձևավորել համապատասխան ինստիտուտներ, որոնք բնորոշ են ազատական տնտեսական համակարգերին: Նման ինստիտուտների ձևավորման պայմաններում առաջ եկավ կայուն տնտեսական աճի ապահովման հրամայականը, ինչը ստեղծված բարդ աշխարհաքաղաքական, տարածաշրջանային և սոցիալ-տնտեսական պայմաններում, բավականին լուրջ հիմնախնդիր է ՀՀ տնտեսության համար: Կայուն տնտեսական աճի ապահովման համատեքստում առաջնային պլան են մղվում ներդրումների ներգրավման և տնտեսության դիվերսիֆիկացման ուղիների որոնումը:

Միջազգային պրակտիկայում ընդունված է, որ ներդրումները «հոսում» են այնպիսի երկրներ և քաղաքներ, որտեղ առկա է տնտեսական մրցակցություն, օրենքի գերակայություն և պաշտպանված է սեփականության իրավունքը:

Ներդրումների ներգրավումն ունի նաև տվյալ երկրին բնորոշ տարածքային բնութագրիչ: Խոսքն այն մասին է, որ ներդրումների ներգրավման գործում մեծ նշանակություն ունեին երկրի խոշոր քաղաքների զարգացվածության աստիճանը: Այս առումով անհրաժեշտություն է առաջացել ուսումնասիրել Երևան քաղաքի ներդրումային պոտենցիալն ըստ քաղաքում ձևավորված տնտեսության ոլորտների: Նման հետազոտությունը հնարավորություն կտա վեր հանել Երևան քաղաքի համեմատական առավելություններն ըստ ներդրումային պոտենցիալի:

Պետք է նշել, որ ՀՀ-ում ներդրումների զգալի աճ գրանցվեց 2000-2007թթ. ընթացքում, որը բնորոշ էր նաև Երևան քաղաքին, սակայն այդ տեմպերը էապես նվազեցին սկիզբ առած համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով: Այս առումով ևս նման հետազոտության իրականացումը կնպաստի ներդրումների ճշգրիտ բաշխման ու վերաբաշխման գործընթացին Երևան քաղաքի զարգացման տեսանկյունից:

Կարևորագույն և դեռ համակողմանի չուսումնասիրված հիմնախնդիր է նաև Երևան քաղաքի տարածքային համաչափ զարգացման հիմնախնդիրն ըստ քաղաքի բյուջեի եկամուտների և ծախսերի կառուցվածքի:

Տարածքային զարգացման վրա ներդրումների ազդեցությունը չափելու հիմնախնդրի բարդությունը (և դրա հետ կապված սահմանափակ հետազոտողների առկայությունն այս հիմնախնդրի լուծման գործում) կայանում է նրանում, որ, օրինակ, նույնիսկ խոշոր քաղաքների մասշտաբով ՀՆԱ-ի ցուցանիշ չի հաշվարկվում և վիճակագրական մարմինների կողմից էլ այդ մասին տվյալներ չեն հրապարակվում:

Նման պայմաններում կարևոր է ճիշտ գնահատել Երևան քաղաքի ներդրումային պոտենցիալը և մշակել գործիքներ, որոնք պետք է կիրառվեն կարճաժամկետ ու միջնաժամկետ

հեռանկարներում ապահովելու համար ներդրումների ներգրավումը, ինչպես նաև պետք է մշակվեն զարգացման տարբեր սցենարների դեպքում այդ ներդրումների բաշխման մեխանիզմներն Երևան քաղաքում տնտեսական գործունեության առանձին ոլորտների միջև:

Վերը շարադրվածից ելնելով կարևորվում են ներդրումների ներգրավման տարածքային հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիների ուսումնասիրությունը՝ Երևան քաղաքի օրինակով:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը Երևան քաղաքի տնտեսական ու ներդրումային ներուժն է, իսկ ուսումնասիրության առարկան՝ ներդրումների ներգրավման տարածքային հիմնախնդիրները Երևան քաղաքի համար:

Հետազոտության նպատակը և հիմնախնդիրները: Ատենախոսության հիմնական նպատակն է՝ վերլուծել Երևան քաղաքի ներդրումային պոտենցիալը և առաջարկել միջոցառումների համալիր ներդրումների ներգրավման ավելացման, ինչպես նաև քաղաքի առանձին ոլորտների միջև ներդրումների արդյունավետ բաշխման համար: Առաջ քաշված նպատակին հասնելու համար ձևակերպվել են հետևյալ հիմնախնդիրները՝

- ցույց տալ կայուն սոցիալ-տնտեսական զարգացման գործում ներդրումների ներգրավման դերը,
- հետազոտել ՀՀ ներդրումային վիճակը և տարվող տնտեսական քաղաքականությունը,
- ուսումնասիրել ներդրումների վրա ազդող տարածքային գործոններն ու խոչընդոտները,
- վերլուծել խոշոր քաղաքներում մակրոտնտեսական և ներդրումային հոսքերի վիճակը համաշխարհային տնտեսական ճգնաժամից առաջ (2008թ.) և հետճգնաժամային պայմաններում,
- իրականացնել քաղաքի ներդրումային գրավչության գնահատման մեթոդների համալիր վերլուծություն,
- գնահատել Երևան քաղաքի ներդրումային գրավչության աստիճանը,
- ներկայացնել քաղաքի ներդրումային գրավչությունը որպես մրցակցության գործոն,
- ուսումնասիրել Երևան քաղաքի զարգացման հիմնական ծրագրերը և բյուջեի ծախսման ուղղությունները,
- ներկայացնել «ստեղծագործ» քաղաքի չափանիշները,
- հետազոտել ներդրումային միջավայրի բարելավման պետական և համայնքային ասպեկտները,
- հաշվարկել ու գնահատել Երևան քաղաքի ՀՆԱ-ն,
- մոդելավորել ներդրումների արդյունավետ վերաբաշխման գործընթացն և գնահատել դրանց մեծությունները ըստ զարգացման տարբեր սցենարների:

Ատենախոսության գիտական նորույթը: Աշխատության հիմնական գիտական արդյունքներն ունեն տեսական և գործնական նշանակություն, որոնց գիտական նորույթը կայանում է հետևյալում.

- Երևան քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացման քանակական գնահատման հիման վրա մշակվել է Երևան քաղաքի ներդրումային գրավչության գնահատման նոր մեխանիզմ, որը կիրառվել է Երևան քաղաքի համար, իսկ ներդրումային միջավայրը դիտարկվում է որպես մրցակցության գործոն,
- մշակվել են Երևան քաղաքի ՀՆԱ-ի հաշվարկման երեք՝ վատատեսական, ընթացիկ և լավատեսական սցենարներ, որոնց հիման վրա հաշվարկվել է Երևան քաղաքի ՀՆԱ-ն, ինչպես նաև ՀՆԱ-ի առավելագույն արժեքը տնտեսական առկա պայմաններում,

- տնտեսաչափական մոդելների կիրառմամբ գնահատվել է ՀՀ-ում տարվող ներդրումային քաղաքականությունը, ինչի հիման վրա մշակվել են Երևան քաղաքի տնտեսության վրա ներդրումների ազդեցության քանակական մոտեցումները զարգացման տարբեր սցենարների դեպքում Երևան քաղաքի ՀՆԱ-ն առավելագույն մակարդակի հասցնելու համար,
- գնահատվել է նաև ներդրումային տարբեր սցենարների դեպքում Երևան քաղաքի գործազրկության մակարդակի նվազման չափերը մինչև 2020 թվականն ընկած ժամանակահատվածում:

Ատենախոսության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը: Աշխատանքի տեսական և մեթոդաբանական հիմքը կազմել են ՀՀ օրենքները, միջազգային ֆինանսական կազմակերպությունների և ՀՀ ներդրումային դաշտի, ինչպես նաև դրանց հիմնական մեթոդներին վերաբերող արտասահմանյան և հայրենական տնտեսագետների հրապարակած գիտական աշխատանքները, միջազգային ֆինանսական կազմակերպությունների զեկույցները և այլն: Ուսումնասիրության համար տեսական հիմք են ծառայել օտարերկրյա հետազոտողների աշխատությունները, միջազգային կազմակերպությունների և փորձագետների հետազոտությունների արդյունքներն ու հրապարակումները:

Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ Ազգային Վիճակագրական ծառայության, ՀՀ Կենտրոնական բանկի, Երևանի քաղաքապետարանի և միջազգային կազմակերպությունների հրապարակած տվյալներն ու կանխատեսումները, ինչպես նաև էլեկտրոնային կայքերը:

Ատենախոսությունում կիրառվել են վիճակագրական խմբավորումների, համեմատական վերլուծությունների, իրավիճակային և վիճակագրական վերլուծությունների մեթոդները:

Հետազոտության արդյունքների գործնական նշանակությունը և օգտագործումը: Ատենախոսության գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ աշխատության արդյունքները կարող են օգտագործվել ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում, Երևանի քաղաքապետարանում, ինչպես նաև ՀՀ-ում ներկայացուցչություն ունեցող միջազգային ֆինանսական կազմակերպություններում: Երևան քաղաքում ներդրումների ներգրավման ծավալների մեծացման հետ կապված առաջարկությունները կարող են օգտագործվել ՀՀ կառավարության, Երևանի քաղաքապետարանի կողմից իրականացվող Երևանի զարգացմանը միտված ծրագրերում: Ատենախոսության առանձին հարցադրումներն և արդյունքները կարող են հետաքրքրել տնտեսագիտական ուղղվածության ԲՈՒՀ-երի ուսանողներին:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացվել և քննարկվել են Եվրասիա միջազգային համալսարանում կազմակերպված հանրապետական գիտաժողովներում (2012թ., 2014թ.) և առանձին թեմատիկ քննարկումների ժամանակ:

Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված 4 գիտական հրապարակումներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածից: Ատենախոսության ծավալը առանց հավելվածների կազմում է 167 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **«Ներածություն»** բաժնում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակը և հիմնախնդիրները, գիտական նորույթը, տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, ստացված արդյունքների գործնական նշանակությունը և օգտագործումը, ստացված արդյունքների փորձարկումը և հրապարակումները, ինչպես նաև ատենախոսության կառուցվածքը և ծավալը:

Ատենախոսության առաջին՝ **«Քաղաքների զարգացման ռազմավարական ուղղությունները ներդրումների ներգրավման համատեքստում»** գլխում ներկայացվել են տնտեսական աճի ապահովումն ու օտարերկրյա ներդրումների ներգրավումը որպես՝ կայուն սոցիալ-տնտեսական զարգացման նախապայման, քաղաքների դերը ժամանակակից տնտեսության մեջ, արդյունաբերական քաղաքների զարգացման ռազմավարական ուղղությունները, քաղաքների կառավարման հիմնախնդիրները ներդրումների ներգրավման գործում, քաղաքների ներդրումային դիրքի գնահատման միջազգային փորձը:

Ինչպես առանձին երկրի, տարածաշրջանի, այնպես էլ խոշոր քաղաքի մակրոտնտեսական իրավիճակի գնահատման կարևոր ցուցանիշ է ներդրումային գործընթացի հետազոտումը, որն արտացոլվում է ՀՆԱ-ում ներդրումների տեսակարար կշռի կամ կուտակման նորմայի ցուցանիշով: Կայուն տնտեսական աճ ապահովելու համար անհրաժեշտ է ապահով կուտակման այնպիսի նորմա, որը մոտ է խնայողությունների նորմայի մակարդակին և բացի այդ պետք է նպաստեն զուտ ներդրումների աճին: Այդ նպատակների համար հեղինակն ուսումնասիրել է 1999-2013թթ. Ժամանակահատվածում ՀՀ ՀՆԱ-ի, վերջնական սպառման ծախսերի և համախառն կուտակման նորմայի ցուցանիշները, որոնցից հետևում է, որ 1999, 2000, 2001, 2012 և 2013թթ.-ին վերջնական սպառման ծախսերը գերազանցել են ՀՆԱ-ի մեծությունը: Իսկ ՀՀ համախառն ազգային եկամտի կառուցվածքից հետևում է, որ 2005-2012թթ. հիմնական կապիտալի սպառումը նվազել է 2.2 տոկոսային կետով և 2012թ. կազմել է 10.1%, մինչդեռ բնականոն տնտեսության պայմաններում հիմնական կապիտալի սպառման ցուցանիշը 4-4.5 անգամ ավելի մեծ պետք է լիներ: Նման պայմաններում սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման հիմնական ուղին արտաքին ներդրումները և փոխառություններն են:

Ուսումնասիրված է ՀՀ բնակչության խնայողությունների շարժը, ինչպես նաև բանկերի առևտրային վարկային ներդրումների ցուցանիշները, որոնցից հետևում է, որ դրանց տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 2013թ.-ին կազմել է 38.8%, 2005թ. 8.5%-ի փոխարեն (1999թ.-ին՝ այդ ցուցանիշը կազմել է 7.6%): Վիճակագրական տվյալներից հետևում է, որ 2005-2008թթ. հիմնական կապիտալի սպառման ծախսերի տեսակարար կշիռը համախառն ազգային եկամտի կառուցվածքում տատանվել է 10.1%-ից (2008թ.) 12.3% (2005թ.) սահմաններում, համաշխարհային տնտեսական ճգնաժամից հետո կայունանալով 10 տոկոսի սահմաններում:

ՀՀ ներդրումներն արտերկրում 2014թ.-ին 2012թ. համեմատությամբ զգալիորեն ավելացել են (18,78 մլն դոլարից հասնելով 230,7 մլն դոլարի), ընդ որում հատկապես կտրուկ ավելացել են կարճաժամկետ վարկերի արտահոսքը այլ երկրներ: Հետազոտվել է նաև ՀՀ-ում կատարված օտարերկրյա ներդրումների համախառն հոսքերը (այդ թվում նաև ըստ ներդրումների տեսակների): Հատկանշական է նաև, որ 2013թ.-ին 2009թ.-ի համեմատ օտարերկրյա ուղղակի ներդրումների տեսակարար կշիռը համախառն ներդրումների մեջ 2013թ.-ին կազմել է 8.2% (2009թ.-ին՝ 30.2%, իսկ 1988-2013թթ. միջին ցուցանիշը կազմել է 28.4%): ՀՀ-ում ներդրումները կատարվում են հիմնականում այն ոլորտներում, որոնք ունեն կա՛մ հումքային ուղղություն,

կա՛մ ենթակառուցվածքային են, մինչդեռ պետք է խրախուսել այսպես կոչված «խելոք փողերը», որպես ներդրումների հիմնական հոսքեր:

Զարգացման ներկայիս անորոշությունների պայմաններում ճշգրիտ ռազմավարություն մշակել հնարավոր չէ, բայց կարելի է առանձնացնել մի քանի գործոններ, որոնցից կախված է արտադրական տարածքների ճգնաժամի խորությունը և, հետևաբար, նաև կոնկրետ անհրաժեշտ մասշտաբի ձևափոխությունները այս կամ այն զարգացման սցենարի դեպքում:

Այդ գործոնները ներառում են՝

- արդյունաբերական գործունեության տեսակները և շուկայական պայմանները (արդյոք կան ապրանքի տեխնոլոգիական բարելավման հեռանկարներ և պահանջարկ դրա նկատմամբ),
- ազդեցության արգելափակման խորությունը (ամուր ցանցից մինչև մասնատված),
- կլաստերի չափը և դիվերսիֆիկացիայի աստիճանը[1]:

Այդ գործողությունների վերլուծության հիման վրա կատարվում է ռազմավարության ընտրություն, որի հիմքում ընկած պետք է լինի հետևյալ հարցի հստակ պատասխանը. արդյոք ամբողջովին հրաժարվել թողարկվող արդյունաբերական արտադրանքից, իսկ այնուհետ գնալ դեպի «ստեղծագործ (կրեատիվ) արտադրության» զարգացման ճանապարհով կամ դիվերսիֆիկացնել գոյություն ունեցողը, թե՞ ստեղծել նոր արդյունաբերական կլաստեր, որը կլինի ժամանակակից տնտեսությանը համահունչ:

Խոշոր քաղաքապետարանների ստեղծումը առանց ակնհայտ տեղական ներկայացուցչական ձևերի բացառություն է: Դա հստակ երևում է աղյուսակ 1-ից, որտեղ ընդհանրացված ձևով ներկայացված են նշված խոշոր քաղաքների կառավարման մոդելները: Ամենատարածված կառավարման համակարգը այն համակարգն է, որը հեղինակն առաջարկում է անվանել «միաստիճան մոդել ապակենտրոնացման տարրերով»: Այս մոդելի շրջանակներում, ներքաղաքային տարածքներում, կան տարբեր աստիճանի անկախության ընտրովի մարմիններ, բայց նրանք չեն ձևավորվել ըստ առանձին համայնքների: Քաղաքապետարանի կարգավիճակ ունի միայն միասնական համակարգի կառավարումը ամբողջ քաղաքի տարածքում:

Ատենախոսության երկրորդ՝ **«Քաղաքների ներդրումային գրավչության գնահատման մեթոդները և դրանց կիրառումը Երևան քաղաքի համար»** գլխում քննարկվել են քաղաքի ներդրումային գրավչությանը և գնահատման մեթոդներին վերաբերող հիմնահարցերը, քաղաքի ներդրումային գրավչությունը ներկայացվել է որպես մրցունակության գործոն, ներկայացվել են Երևան քաղաքի ներդրումային գրավչության գնահատման մեխանիզմները, ինչպես նաև Երևան քաղաքի հիմնական ծրագրերը և բյուջեի մուտքերի ու ծախսերի կառուցվածքը:

Քաղաքի ավելի ընդհանուր ներդրումային քաղաքականությունն իր մեջ ներառում է հետևյալ հիմնական տարրերը.

- ✓ օրենսդրական և նորմատիվ իրավական ակտերի մշակում և ընդունում, որը կարգավորում է ներդրումային գործընթացը,
- ✓ մասնավոր կապիտալի անվտանգությունը ապահովող երաշխիքներ, հարկային և այլ արտոնություններ, հարկային և վարձակալության վճարների հետաձգում (արտոնություն), ֆինանսական խթաններ,
- ✓ ներդրումային գործունեության կազմակերպական կառույցների աջակցության ստեղծում,

[1] Todtling F., Trippl M. Like Phoenix from the Ashes? The Renewal of Clusters in Old Industrial Areas//Urban Studies. May 2004. Vol. 41. № 5/6. P. 1178.

✓ զարգացման աջակցություն, փորձաքննության և ներդրումային ծրագրերի աջակցության իրականացում,

✓ առևտրային բանկերին երաշխիքների տրամադրում, որոնք ֆինանսավորում են ներդրումային ծրագրեր,

✓ բնակչության միջոցների համակենտրոնացում քաղաքային արժեթղթերի թողարկման միջոցով,

✓ տարածաշրջանային ներդրումային ենթակառուցվածքների ինստիտուտների կայացման խրախուսում:

Աղյուսակ 1

Խոշոր քաղաքների կառավարման կազմակերպումը[2]

Քաղաքի անվանումը	Մոդելի ձևը	Քաղաքային շրջանների կառավարման բնութագիրը			
		ընտրովի մարմին-ներ	անկախ եկամտի աղբյուրներ	անկախ բյուջեներ	ծառայությունների մատուցման ամրագրված լիազորություններ
Տորոնտո (1998թ.-ից հետո)	Միաստիճան	-	-	-	-
Բեռլին	Միաստիճան, Ապակենտրո-նացման տարրերով	+	+	-	+
Նյու-Յորք	Միաստիճան, Ապակենտրո-նացման տարրերով	+	-	-	-
Փարիզ	Միաստիճան, Ապակենտրո-նացման տարրերով	+	-	-	+
Մոնրեալ	Միաստիճան, Ապակենտրո-նացման տարրերով	+	+	-	+
Ամստերդամ	Միաստիճան, Ապակենտրո-նացման տարրերով	+ (տարածքի մասում)	-	-	+
Բուդապեշտ	Երկաստիճան	+	+	+	+
Վարշավա	Երկաստիճան	+	+	+	+
Տորոնտո (մինչ 1998 թ.-ը)	Երկաստիճան	+	+	+	+

Քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացման ընթացքը հիմնականում որոշվում է նորարարությամբ, տեղեկատվության և գիտության գործոնների առկայությամբ և դրանց

[2] И. Стародубровская, М. Славгородская, С. Жаворонков, Организация местного самоуправления в городах федерального значения, Институт Экономики Переходного Периода, Научные труды № 87Р, Москва, 2004, с. 45.

ներդրման հնարավորությամբ: Քաղաքի նորարարական զարգացումը ենթադրում է դրա համապատասխան արտացոլումը սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրում և քաղաքի արդյունավետ զարգացման համակարգի ստեղծումը:

Քաղաքի ներդրումային միջավայրը պահանջում է հիմնել որոշակի պայմաններ ներդրումային գործընթացը հաջողությամբ իրականացնելու համար:

Ներդրումային միջավայրի վրա ազդում են հետևյալ գործոնները.

- ✓ մակրոտնտեսական (ՀՆԱ-ի դինամիկան, գնաճի և տոկոսադրույքների մակարդակը, խնայողությունները ՀՆԱ-ի մեջ),
- ✓ նորմատիվ իրավական (իրավական դաշտի որակը, կայունությունը և քաղաքային օրենսդրությունը, կենտրոնական և տեղական իշխանության քաղաքականությունը, սեփականության իրավունքի պաշտպանվածության աստիճանը, ներդրողների իրավունքների պաշտպանությունը, մենաշնորհների առկայությունը տնտեսության մեջ, կորպորատիվ կառավարման աստիճանը),
- ✓ հարկային (հարկային համակարգի որակը, հարկային բեռի մակարդակը),
- ✓ տեղեկատվական աջակցություն (տեղեկատվական համակարգերի ձևավորման ապահովում, ամբողջ քաղաքում ներդրումային հնարավորության տեղեկատվության մատչելիություն, ընկերությունների վերաբերյալ տեղեկատվություն, տեղեկատվության համապատասխանություն, տեղեկատվության աղբյուրի վստահելիություն, ԶԼՄ-ների գովազդատեղեկատվական արշավների իրականացում, ներդրումային ցուցահանդեսների, սեմինարների, դասախոսությունների, ներդրումային առաքելությունների կազմակերպում),
- ✓ երկրի անկանխատեսելիությունը և անթափանցիկությունը ներդրողների հանդեպ (երկրի անթափանցիկությունը ներդրողների հանդեպ ընկալվում է, որպես ամբողջ երկրի համար ընդունված ֆորմալ գործոնների բացակայություն դեպի համաշխարհային և ազգային կապիտալի գործունեություն),
- ✓ միջազգային տնտեսական և ֆինանսական կազմակերպությունների վճարման ենթակա արտաքին պարտքը, այս գործոնը կարևոր դեր է խաղում երկրում ներդրումային միջավայրի կայացման համատեքստում:

Նշված գործոնները ներդրումային գործունեության ժամանակում կարող են ունենալ ինչպես խթանող, այնպես էլ դանդաղեցնող ազդեցություն:

Քաղաքի մրցունակության գնահատումը իրականացվում է հետևյալ 5 հիմնական տարրերով.

1. Բազային առավելություններ (աշխարհագրական դիրքը, բնական ռեսուրսները, բնակչությունը և քաղաքաշինությունը):
2. Բիզնես-պորտֆելը (առանձին կլաստերների մրցունակություն, տեղական հատվածների զարգացում):
3. Գործարար եղանակ (քաղաքի գործարար եղանակը ամբողջությամբ, կյանքի որակը, նորարարական ենթակառուցվածք):
4. Անձնակազմի արդյունավետություն և ռազմավարական քայլերի հետևողականություն (ինստիտուցիոնալ գործոնների բարելավում, քաղաքականության հիմնական ուղղությունների բարելավում, քաղաքային արդյունավետ ռազմավարություն):
5. Քաղաքի մրցունակությունը պետք է դիտել որպես նրա ամենակարևոր բաղադրիչներից մեկը, ինչի մեջ մտնում է ներդրումային ռիսկը: Ներդրումային ներուժը կարող է դիտվել որպես մի շարք օբյեկտիվ (բնակլիմայական, տարածքային և այլն) և սուբյեկտիվ (տնտեսական, ֆինանսական և այլն) գործոնների տեսքով, որոնք ազդում են ներդրումային գործոնների վրա և ապահովում են քաղաքի ինտենսիվ զարգացումը (գծանկար 1):



Գծանկար 1. Քաղաքի մրցունակության վերլուծության փուլերը[3]

Ամփոփելով կատարված հաշվարկները հեղինակը փաստել է, որ՝

- Երևան քաղաքի տնտեսության առանձին ոլորտներ (արդյունաբերություն, շինարարություն, ծառայությունների ոլորտ և արտահանման տեմպեր) ունեն աճի առաջանցիկ տեմպեր ՀՀ տնտեսության նկատմամբ,
- Երևան քաղաքի տնտեսության ոլորտների միջև եղած կոոպերացման աստիճանն ավելի բարձր է, քան ՀՀ-ում: Այդ նպատակով ուսումնասիրվել են Երևան քաղաքի տնտեսության առանձին ոլորտների միջև եղած կապը բնութագրող մոդելների սահմանային հակվածությունը բնութագրող գործակիցները: Այդ գործակիցների գումարային արդյունքը Երևան քաղաքի համար ավելի մեծ է քան ՀՀ տնտեսության համար: Մյուս կողմից առանձին ոլորտների միջև եղած կապը բնութագրող մոդելների հաշվարկային գործակիցների մեծությունը Երևան քաղաքի համար ավելի մեծ է, քան ՀՀ տնտեսության համար: Հետևաբար Երևան քաղաքում կոոպերացման աստիճանն ավելի բարձր է քան ՀՀ տնտեսությունում:
- Երևան քաղաքը ներդրումների ներգրավման տեսանկյունից ավելի գրավիչ է, քան ամբողջ ՀՀ տնտեսությունը: Համադրելով այն փաստը, որ տնտեսության որոշ ոլորտներ Երևան քաղաքում ավելի առաջանցիկ տեմպերով են աճում, քան ՀՀ տնտեսության դեպքում, մյուս կողմից հաշվի առնելով այն հանգամանքը, որ Երևան քաղաքում կոոպերացման մակարդակը ավելի բարձր է քան ՀՀ տնտեսության դեպքում, հեղինակը է փաստում է, որ ներդրողի տեսանկյունից ավելացված արժեք ստեղծելու և ներդրումներից մեծ եկամուտ ստեղծելու առումով Երևան քաղաքը շատ ավելի գրավիչ է:

[3] Азат Сафиуллин, Инвестиционная привлекательность территории как фактор ее конкурентоспособности, ЭКОНОМИЧЕСКИЕ СТРАТЕГИИ, № 8/2009, с.146.

Հեղինակն ուսումնասիրել է ՀՀ մարզերի և Երևան քաղաքի արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն ըստ տնտեսական գործունեության տեսակների, արդյունաբերական արտադրանքի արտադրությունն ըստ Երևան քաղաքի վարչական շրջանների (այդ թվում նաև բնակչության մեկ շնչի հաշվով), Երևան քաղաքի 2015թ. զարգացման առաջնահերթ ուղղությունները, ներկայացվել են Երևան քաղաքի 2015թ. բյուջեի նախագծով ծրագրված ծախսերի սկզբունքների հիմնավորումներն ըստ ծրագրերի: Երևան քաղաքի 2014-2015թթ.-ի զարգացման ծրագրերի ուսումնասիրությունից հետևում է, որ 14 ծրագրերից 12-ը շարունակական են:

Երևան քաղաքի բյուջեից կատարվող ծախսերի շուրջ 89%-ը ընթացիկ ծախսերն են (վարչական բյուջեն), ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերի հաշվին կատարվող կապիտալ ծրագրերի ծախսերը, եթե 2014թ.-ին կազմել են 10.6% (8.2 մլրդ դրամ), ապա 2015թ.-ին՝ համապատասխանաբար՝ 8.4% (6.6 մլրդ դրամ) (աղյուսակ 2): Երևան քաղաքի հիմնական ծախսերն ըստ գործառնական դասակարգման 2014-2015թթ. և դրանց կառուցվածքը բերված են աղյուսակ 3-ում: երևան քաղաքի ծախսերն ըստ վարչական շրջանների և դրանց կառուցվածքը բերված են աղյուսակ 4-ում: 2015թ.-ին այդ ծախսերի 14.5%-ը բաժին է հասնելու Կենտրոնին, 11.7%-ը՝ Նոր Նորքին, Արաբկիր և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջաններին 11.4%-ական, 11.0%-ը՝ Շնգավիթին:

Աղյուսակ 2

Երևան քաղաքի 2014թ. և 2015թ. բյուջեների ընդամենը ծախսերի ծավալը և կառուցվածքը

Հ/Հ	Երևան քաղաքի բյուջեի ընդամենը ծախսերի ուղղությունները	2014		2015	
		հազ. դրամ	%-ով ընդամենի նկատմամբ	հազ. դրամ	%-ով ընդամենի նկատմամբ
	Ընդամենը բյուջեի ծախսեր,	77734522.2	100.0	78728216.4	100.0
1	այդ թվում՝ ընթացիկ ծախսեր (վարչական բյուջե)	69053815.9	88.8	68820368.3	87.4
2	Ոչ ֆինանսական ակտիվների գծով զուտ ծախսեր (ֆոնդային բյուջե)	438000.0	0.6	3300470.0	4.2
3	Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերի հաշվին կատարվող կապիտալ ծրագրերը	8242706.3	10.6	6607378.1	8.4

Աղբյուրը. կազմվել է Երևանի քաղաքապետարանի տվյալներով:

Աղյուսակ 3

Երևանի քաղաքի հիմնական ծախսերն ըստ գործառնական դասակարգման 2014թ. և 2015թ.-ին և դրանց կառուցվածքը

Հ/Հ	Հիմնական ծախսերն ըստ գործառնական դասակարգման	2014		2015	
		մլրդ դրամ	%-ով ընդամենի նկատմամբ	մլրդ դրամ	%-ով ընդամենի նկատմամբ
	Ընդամենը, այդ թվում՝	63.4	100.0	68.1	100.0
1	Կրթություն	23.7	37.4	26.6	39.1
2	Կոմունալ ծառայություններ	9.2	14.5	11.9	17.5
3	Հանգիստ և մշակույթ	3.4	5.4	3.8	5.6
4	Սոց. ապահովություն, առողջապահություն	2.5	3.9	1.8	2.6
5	Շրջակա միջավայր	7.2	11.4	7.5	11.0
6	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	7.8	12.3	8.6	12.6
7	Տնտեսական հարաբերություններ	9.6	15.1	7.9	11.6

Աղբյուրը. կազմվել է Երևանի քաղաքապետարանի տվյալներով:

Աղյուսակ 4

Երևան քաղաքի ծախսերն ըստ վարչական շրջանների 2014թ. և 2015թ.-ին և դրանց կառուցվածքը

Հ/Հ	Երևան քաղաքի վարչական շրջանները	2014		2015	
		մլրդ դրամ	%-ով ընդամենի նկատմամբ	մլրդ դրամ	%-ով ընդամենի նկատմամբ
1	Արաբկիր	2.7	11.4	2.9	11.4
2	Քանաքեռ-Զեյթուն	1.8	7.6	1.9	7.5
3	Ավան	1.4	5.9	1.5	5.9
4	Նորք-Մարաշ	0.5	2.1	0.5	2.0
5	Նոր Նորք	2.8	11.8	3.0	11.7
6	Էրեբունի	2.1	8.9	2.3	9.0
7	Նուբարաշեն	0.3	1.3	0.3	1.2
8	Շենգավիթ	2.6	11.0	2.8	11.0
9	Կենտրոն	3.5	14.7	3.7	14.5
10	Մալաթիա-Սեբաստիա	2.7	11.4	2.9	11.4
11	Աջափնյակ	2.3	9.7	2.5	9.7
12	Դավթաշեն	1.0	4.2	1.2	4.7
Ընդամենը		23.7	100.0	25.5	100.0

Աղբյուրը. կազմվել է Երևանի քաղաքապետարանի տվյալներով:

Աշխատանքի երրորդ՝ «**Ներդրումային միջավայրի բարելավման հիմնական ուղղությունները և Երևան քաղաքի ներդրումների գնահատումն ըստ զարգացման սցենարների**» գլխում հետազոտվել են ստեղծագործ քաղաքի չափանիշները, ներդրումային միջավայրի բարելավման պետական (ընդհանուր) և համայնքային (տարածքային) ասպեկտները, ինչպես նաև հաշվարկվել է Երևան քաղաքի ՀՆԱ-ի մեծությունը և տրվել է ներդրումների գնահատումն ըստ զարգացման սցենարների:

Օտարերկրյա ներդրողներին տրամադրվող խթանների լայն համակարգի կիրառումը կարող է կտրուկ ավելացնել ներդրումների ծավալները: Այդ նպատակով հեղինակը քննարկել է ՀՀ ներդրումային միջավայրի ռիսկերը (տարածաշրջանի լարված քաղաքական իրավիճակը, հարևան 2 երկրների կողմից շրջափակումը, դեպի ծով ելք չունենալը և այլն), ինչպես նաև ներդրումների ընդգրկման կարևոր նախապայմանները (բարձրորակ աշխատուժը, ենթակառուցվածքների առկայությունը, մասնավոր հատվածի կողմից գործարարությամբ զբաղվելու ճանապարհով միջոցների ներդրումը և այլն): Առանձնակի կարևորվել է ներդրումային միջավայրի վրա ազդող հիմնական գործոնները (ներդրումների գրավչությունը և արդյունավետությունը, և դրանք պայմանավորող հանգամանքները, ներդրումների ֆինանսավորման աղբյուրները, բարենպաստ գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդող մյուս հիմնական գործոնները ԵԱՀԿ 17 անդամ երկրներում):

ՀՀ-ում օտարերկրյա ներդրումների օրենսդրական դաշտի բարելավման նպատակով, ՀՀ կառավարությունն այս ոլորտում հաջողություններ արձանագրելու համար այլ հավասար պայմաններում պետք է.

- տրամադրի հարկային և մաքսային տարբեր արտոնություններ օտարերկրյա ներդրողներին,
- կատարի ծախսերի համաֆինանսավորում,
- զարգացնի ենթակառուցվածքներն ու հեռահաղորդակցությունը,
- ներդրում կատարի կրթության բնագավառում, որն որակյալ աշխատուժի նախապայմանն է,
- ապահովի լայն սպառողական շուկա:

Ներկայացվել են ներդրումային ոլորտում պետական քաղաքականության հիմնական ուղղությունները բարենպաստ ներդրումային միջավայրի ձևավորման և պետական ներդրումների իրականացման, ինչպես նաև տնտեսության մասնավոր հատվածի ներդրումային գործունեության աջակցության ոլորտներում:

Տարբերակվում են խթանների և զեղչերի հետևյալ խմբերը՝

- արտաքին առևտրային խթաններ և զեղչեր, որոնք նախատեսում են հատուկ մաքսային սակագնային ռեժիմի ներմուծում,
- հարկային խթաններ և զեղչեր, որոնք իրենց մեջ ներառում են այնպիսի նորմեր, որոնք կապված են գործունեության կոնկրետ տեսակների համար հարկային խթանների տրամադրման հետ: Այդ զեղչերը կարող են վերաբերվել հարկային բազային ամբողջությամբ, կամ դրա առանձին տարրերին,
- ֆինանսական խթաններ և զեղչեր, որոնց մեջ են մտնում տարբեր տեսակի սուբսիդիաներ: Դրանք տրամադրվում են կոմունալ ծառայությունների համար գների առավել ցածր մակարդակի սահմանման, վարձակալական վճարների կրճատման և այլ գործառությունների կատարման միջոցով,
- վարչական խթաններ և զեղչեր, որոնք տրամադրվում են տվյալ տարածքի (գոտու) ադմինիստրացիայի կողմից, նպատակ ունենալով կրճատելու կազմակերպությունների

գրանցման ընթացակարգի ժամանակը, օտարերկրյա քաղաքացիների ներհոսքն ու արտահոսքը և այլն[4],

- վերը նշված բոլոր տեսակի խթաններն ու զեղչերն անհրաժեշտ է ներառել ներդրումային քաղաքականության ծրագրում, որի կապը ներդրումային կլիմայի վրա ժամանակային կտրվածքով պետք է լինի հստակ և որոշակի:

Հեղինակի կողմից փորձ է արվել գնահատել ներդրումների թողած հնարավոր ազդեցությունը Երևան քաղաքի ՀՆԱ-ի վրա, ինչպես նաև գնահատել ներդրումների հնարավոր ծավալները Երևան քաղաքի ՀՆԱ-ի աճի տեմպի փոփոխության տարբեր սցենարների դեպքում: Մյուս խնդիրը, որ մոդելավորվել է, վերաբերում է Երևան քաղաքում գործազրկության մակարդակի գնահատմանը 2015-2020թթ. ժամանակահատվածում: Երևան քաղաքի ՀՆԱ-ի աճի տարբեր սցենարների դիտարկման դեպքում փորձ է արվել գնահատել ներդրումների թողած ազդեցությունը Երևան քաղաքի ՀՆԱ-ի փոփոխության և Երևան քաղաքում գործազրկության մակարդակի նվազման վրա:

Քանի որ Ազգային վիճակագրական ծառայությունը պաշտոնապես չի հրապարակում առանձին քաղաքների կամ մարզերի ՀՆԱ-ի մեծությունները, ուստի հեղինակի կողմից փորձ է արվել մոդելավորել Երևան քաղաքի ՀՆԱ-ի հաշվարկման գործընթացը[5]:

Երևան քաղաքի ՀՆԱ-ն հաշվարկելու համար կիրառվել է հետևյալ մեթոդաբանությունը՝ հաշվարկվել է տնտեսության առանձին ոլորտների կողմից Հայաստանի Հանրապետության ՀՆԱ-ի վրա թողած ազդեցությունը: Ստացված հաշվարկային բանաձևի մեջ տեղադրվել են Երևան քաղաքի տնտեսության առանձին ոլորտների թողարկման ծավալները և ստացվել է Երևան քաղաքի ՀՆԱ-ն:

Երևան քաղաքի ՀՆԱ-ի հաշվարկման համար հաշվարկվել է ՀՀ տնտեսության համար հետևյալ բազմաչափ ռեգրեսիոն մոդելը՝

ՀՆԱ=F(արդյունաբերություն, գյուղատնտեսություն, շինարարություն, առևտուր, ծառայություններ, զուտ արտահանում):

Հաշվարկման համար անհրաժեշտ տվյալների բազան ընդգրկում է 2003-2013թթ.:

Հաշվարկներն իրականացվել են Eviews 8.1 ծրագրային փաթեթի օգնությամբ:

Երևան քաղաքում պահանջվող ներդրումների հաշվարկային արժեքներն ըստ ՀՆԱ-ի կանխատեսումների 3 սցենարների միչև 2020թթ. ներկայացված են աղյուսակ 5-ում:

---

[4] Кузнецов А. И., Мировая экономика и международные отношения, М., 1994, с. 203.

[5] Այս կարևոր հիմնախնդրի ուսումնասիրությանն են նվիրված առանձին հեղինակների աշխատանքները. տե՛ս, մասնավորապես, Аничин В. Л., Тимофеев И. Ю. ВВП: преимущества и недостатки показателя. В мире научных открытий, 2012, N6, с. 33-47, Մովսիսյան Մ., Տարածքային ՀՆԱ-ի հաշվարկման հիմնախնդիրները, Մարզերի զարգացման սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում:/ հանրապետական գիտաժողովի նյութեր.-Եր.: Նահապետ, 2014, էջ 75-79, Գրիգորյան Կ., ՀՀ մարզերի տնտեսական յուրացվածության համեմատական վերլուծությունը, Մարզերի զարգացման սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում:/ հանրապետական գիտաժողովի նյութեր.-Եր.: Նահապետ, 2014, էջ 68-74, Քթոյան Ա., Սոցիալ-տնտեսական զարգացման տարածքային ահնամաչափության գնահատումը ՀՀ-ում, Մարզերի զարգացման սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում:/ հանրապետական գիտաժողովի նյութեր.-Եր.: Նահապետ, 2014, էջ 80-87, Հարությունյան Ն., Հայաստանի Հանրապետության տարածքային պլանավորման նոր մոտեցում, Մարզերի զարգացման սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում:/ հանրապետական գիտաժողովի նյութեր.-Եր.: Նահապետ, 2014, էջ 88-95, Ջանվելյան Վ., Ներուժային համախառն ներքին արդյունքի գնահատման մոտեցումները Հայաստանի Հանրապետությունում, Տնտեսական զարգացման քաղաքականության արդի հիմնախնդիրները ՀՀ-ում: Գիտաժողովի նյութեր/ ՀՊՏՀ:-Եր.: Տնտեսագետ, 2014, էջ 250-256:

Աղյուսակ 5

Երևան քաղաքում պահանջվող ներդրումների հաշվարկային արժեքներն ըստ ՀՆԱ-ի կանխատեսումների 3 սցենարների 2015-2020թթ., հազ. ԱՄՆ դոլար[6]

Տարի	Սցենար 1	Սցենար 2	Սցենար 3
	ՀՆԱ-ի հավելաճի տեմպը՝ 3%	ՀՆԱ-ի հավելաճի տեմպը՝ 5%	ՀՆԱ-ի հավելաճի տեմպը՝ 8%
2015	678,496.69	699,829.87	731,829.64
2016	733,429.63	755,829.46	789,429.22
2017	791,109.21	814,629.04	849,908.79
2018	851,672.78	876,368.60	913,412.33
2019	915,264.52	941,195.13	980,091.05
2020	982,035.85	1,009,263.00	1,050,103.71

Հաշվարկները ցույց են տալիս, որ 2015-2020թթ. Երևան քաղաքի ՀՆԱ-ն տարեկան 3%-ով ավելացնելու դեպքում դիտարկվող ժամանակահատվածի վերջում կպահանջվի ներդնել, այլ հավասար պայմաններում, 303.5 մլն ԱՄՆ դոլար: Երևան քաղաքի ՀՆԱ-ն տարեկան 5%-ով ավելացնելու դեպքում դիտարկվող ժամանակահատվածի վերջում կպահանջվի ներդնել, այլ հավասար պայմաններում, 309.4 մլն ԱՄՆ դոլար: Երևան քաղաքի ՀՆԱ-ն տարեկան 8%-ով ավելացնելու դեպքում դիտարկվող ժամանակահատվածի վերջում կպահանջվի ներդնել, այլ հավասար պայմաններում, 318.3 մլն ԱՄՆ դոլար: Ներդրումների բերված ցուցանիշներն անհրաժեշտ են նշված սցենարներում տնտեսական աճի տեմպը պահպանելու համար, իսկ տնտեսական անկում չգրանցելու համար յուրաքանչյուր տարի անհրաժեշտ ներդրումների ծավալը Երևան քաղաքում չպետք է պակաս լինի 600-700 մլն ԱՄՆ դոլարից:

Այժմ գնահատենք Երևան քաղաքի ՀՆԱ-ի հավելաճի նման տեմպերի պայմաններում գործազրկության մակարդակի փոփոխությունները:

Այդ նպատակով կառուցվել է հետևյալ մոդելը՝

$Y = \alpha + \beta^{*}x + e$, որտեղ՝

Y-ն՝ կախյալ փոփոխականն է (Երևան քաղաքում գործազրկության մակարդակն է, %),

X-ն՝ անկախ փոփոխական (Երևան քաղաքի ՀՆԱ-ն, մլն ՀՀ դրամ),

α-ն՝ մոդելի ազատ անդամն է,

β-ն՝ սահմանային հակվածության գործակիցն է,

e-ն՝ մոդելի սխալն է:

Հաշվարկային արդյունքները ներկայացված են աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6-ից երևում է, որ հաշվարկային գործակիցները վիճակագրորեն նշանակալի են, քանի որ t-վիճ. հավանականությունը փոքր է 5%-ից:

Ստացված արդյունքների հիման վրա իրականացված հաշվարկներն ըստ Երևան քաղաքի ՀՆԱ-ի կանխատեսման սցենարների ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 7-ում:

[6] Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից:

Հաշվարկները ցույց են տալիս, որ 2015-2020թթ. Երևան քաղաքի ՀՆԱ-ն տարեկան 3%-ով ավելացնելու դեպքում 2020թ.-ին Երևան քաղաքի գործազրկության մակարդակը 2013թ.-ի 24% մակարդակից կնվազի մինչև 12%, ՀՆԱ-ն տարեկան 5%-ով ավելացնելու դեպքում դիտարկվող ժամանակահատվածի վերջում Երևան քաղաքի գործազրկության մակարդակը 2013թ.-ի 24% մակարդակից կնվազի մինչև 11.01%, իսկ ՀՆԱ-ն տարեկան 5%-ով ավելացնելու դեպքում 2020թ.-ին Երևան քաղաքի գործազրկության մակարդակը կնվազի մինչև 9.53%:

Աղյուսակ 6

Երևան քաղաքի ՀՆԱ-ի ազդեցության գնահատումը Երևան քաղաքի գործազրկության մակարդակի վրա[7]

Անկախ փոփոխական	Գործակից	Ստանդարտ սխալ	t-վիճ.	Հավանականություն
Երևան քաղաքի ՀՆԱ	-1.35E-05	3.46E-06	-3.896691	0.0176
α	62.94618	9.191428	6.848357	0.0024
$R^2 = 0.79$				

Աղյուսակ 7

Երևան քաղաքում գործազրկության մակարդակն ըստ ՀՆԱ-ի կանխատեսումների 2015-2020թթ.-ին,%[8]

Տարի	Սցենար 1	Սցենար 2	Սցենար 3
	ՀՆԱ-ի հավելաճի տեմպը՝ 3%	ՀՆԱ-ի հավելաճի տեմպը՝ 5%	ՀՆԱ-ի հավելաճի տեմպը՝ 8%
2015	23.03	22.25	21.09
2016	21.03	20.22	19.00
2017	18.94	18.08	16.80
2018	16.74	15.84	14.49
2019	14.43	13.49	12.07
2020	12.00	11.01	9.53

Եզրակացություններ բաժնում ամփոփված են հետազոտության արդյունքները: Ատենախոսության շրջանակներում իրականացված վերլուծությունների, ուսումնասիրությունների, հայրենական և արտասահմանյան երկրների ու խոշոր քաղաքներում ներդրումների և ներդրումային միջավայրի բարելավման, դրանց տեղաբաշխման հիման վրա կատարված եզրահանգումները թույլ են տալիս կատարել մի շարք հետևություններ և առաջարկություններ, որոնցից հիմնականներն են՝

[7] Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից:
[8] Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից:

1. Հատկապես ներկայումս, երբ նկատելիորեն նվազել են հանրապետությունում կատարվող ներդրումների ծավալները, ՀՀ կառավարությունը ներդրումային քաղաքականությունը դիտում է որպես Հայաստանի տնտեսական զարգացման կարևորագույն ուղղություններից մեկը: Այդ իսկ պատճառով էլ ներդրումային քաղաքականությունը պետք է նպատակաուղղված լինի ներդրումների ընդգրկմանը խոչընդոտող գործոնների թուլացմանը և դրանք նվազագույնի հասցնելը: Անհրաժեշտ է ձևավորել բարենպաստ ներդրումային և գործարար միջավայր, բացահայտել հանրապետությունում առկա ներդրումային առավելությունները և թերությունները, և դրանցից հետո մշակել համապատասխան միջոցառումներ, որպեսզի Հայաստանում իրականացվող ներդրումների ծավալներն ավելանան և երկիրը դառնա գրավիչ օտարերկրյա ներդրողների աչքերում:

Կարևոր է նաև տնտեսության մասնագիտացման նպատակով համաշխարհային շուկան «հետաքրքրող» ոլորտների բացահայտումը, և դրան համախատասխան օտարերկրյա ուղղակի ներդրումների խրախուսման ռազմավարության ընտրությունը և իրագործումը: Այսպես, մեր երկրի հիմնական առավելությունը որակյալ աշխատուժի առկայությունն է, որի օգտագործումը ներդրողներին հնարավորություն կտա զարգացած երկրների, նաև որոշ զարգացող երկրների համեմատ ցածր աշխատավարձ վճարելով, ապահովել թողարկվող արտադրանքի և մատուցվող ծառայության ցածր ինքնարժեք և գնային մրցունակություն՝ հատկապես արտաքին շուկայում:

ՀՀ-ում, զարգացման ներկա դժվարին սոցիալ-տնտեսական և աշխարհաքաղաքային ու տարածաշրջանային բարդ իրավիճակում, երբ օտարերկրյա ներդրումները նվազում են և թույլ են զարգացման ներքին խթանները, առաջնահերթ կարևորություն են ստանում տնտեսական աճի այն աղբյուրները և միջոցները, որոնք կարող են դառնալ ներդրումների ներգրավման ոլորտներ և տարածքներ: Այդպիսիք կարող են դառնալ խոշոր քաղաքները, ՀՀ-ում՝ Երևանը, որն ունի մյուս բնակավայրերի նկատմամբ համեմատական բազմաթիվ առավելություններ (սոցիալական և արտադրական ենթակառուցվածքներ, որակյալ և էժան աշխատուժի ավելցուկ և այլն), որոնք ներդրված յուրաքանչյուր միավորը կդարձնեն ավելի արտադրողական և տնտեսապես շահավետ:

2. Սոցիալ-տնտեսական առաջընթացի և բնակչության կենսամակարդակի ապահովման ու բարձրացման արդի փուլում խոշոր քաղաքների զարգացումը պետք է նպատակաուղղվի ազգաբնակչության համար աշխատատեղերի ապահովմանը, նրանց պահանջմունքների, անվտանգության, կրթության հասանելիության, կյանքի և կենցաղային պայմանների հարմարավետության, որակյալ սպասարկման և անհրաժեշտ ծառայությունների մատուցման բարելավմանը: Թվարկված խնդիրների լուծումը խոշոր քաղաքի բնակչության կենսագործունեության ապահովման հիմնական երաշխիքն է: Այս դիտակետից խոշոր քաղաքների սոցիալ-տնտեսական նպատակային զարգացումը անհրաժեշտ է իրականացնել համալիր երկարաժամկետ ծրագրերի հիման վրա:

Երևանի սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական զարգացման համալիր նպատակային ծրագրերի մշակման գլխավոր նպատակ պետք է սահմանել քաղաքային տնտեսության զարգացման այնպիսի ուղղությունների և դրանց իրագործման գործիքակազմի ընտրությունը, որը հնարավորություն կտա քաղաքի տարածքում գտնվող յուրաքանչյուր սուբյեկտի առավելագույն չափով իրացնել սեփական արտադրական և ֆինանսական ռեսուրսները և դրանով իսկ ապահովել ստեղծագործ կյանքի պայմաններ:

3. Երևան քաղաքի վարչական շրջանների սոցիալ-տնտեսական զարգացումների և տնտեսական ակտիվության միտումները վկայում են, որ դրանց զարգացմանն ուղղված քաղաքապետարանի գործողությունները պետք է ուղղվեն տեղերում ձեռնարկատիրական և ներդրումային ակտիվության խթանմանը, վարչական շրջանների և միջշրջանային

արտադրական, տրանսպորտային և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանը, հանրային ծառայությունների հասանելիության ու դրանց անհրաժեշտ որակի ապահովմանը, ինչպես նաև վարչական շրջանների ֆինանսական ինքնուրույնության աստիճանի բարձրացմանը: Այսինքն, վարչական շրջանների զարգացման անհամաչափությունների վերացմանն ուղղված միջոցառումները պետք է ապահովեն տարածքներում ձեռնարկատիրական և ներդրումային միջավայրերի արագ առողջացմանը և տեղական ինքնակառավարման մարմինների տարբեր մակարդակների և օղակների աշխատանքի հետևողական բարելավմանը: Կարևոր է նաև ընդգծել, որ միջոցառումների այդ համակարգը պետք է ընթանա <<Երևանի քաղաքապետարան-վարչական շրջաններ-մասնավոր հատված>> համագործակցության խթանմամբ և տարածքային զարգացման համալիր նպատակային ծրագրերի իրագործմամբ: Այդպիսի ծրագրերի իրագործման համար անհրաժեշտ է Երևանի և վարչական շրջանների զարգացման ֆինանսավորման համակարգի բարելավում: Վերջինս ենթադրում է վարչական շրջանների սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղվող պետական միջոցներից հատկացումների, դոնոր կազմակերպությունների կողմից տրամադրվող միջոցների և մասնավոր հատվածի ներդրումների համակարգում:

4. Երևանում ներդրումների ներգրավման տարածքային անհամաչափությունների հաղթահարումը ենթադրում է ոչ միայն ֆինանսական հնարավորությունների ավելացում, այլ նաև տարածքներում (վարչական շրջաններում) լուծել հետևյալ խնդիրները.

- տնտեսության դիվերսիֆիկացում,
- նոր աշխատատեղերի ստեղծում,
- հատկապես երիտասարդության զբաղվածության ապահովման գործուն մեխանիզմների ձևավորում:

Նկատի ունենալով, որ Երևանը, ոչ միայն խոշոր քաղաք է, այլ նաև ՀՀ մայրաքաղաքն է, նշված միջոցառումներին զուգահեռ ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին հնարավոր է իրականացնել՝

- ենթակառուցվածքների կատարելագործում,
- քաղաքային միջին ցուցանիշներից ավելի վատ ցուցանիշներ ունեցող վարչական շրջաններին արտոնյալ օգնության ցուցաբերում՝ նպատակ ունենալով դրանց սոցիալ-տնտեսական, մշակութային և տուրիստական պայմանների բարելավում:

5. Խոշոր քաղաքներում ներդրումներ կատարելիս պետք է հաշվի առնել առանձին տարածքների (Երևանում՝ վարչական շրջանների) պատմական, մշակութային, տրանսպորտային, աշխարհագրական, մարդկային, արտադրական և սոցիալական հնարավորությունները և ներուժը, հենվել տարածքների կառավարման համակարգի շահերի հավասարակշռության, քաղաքի սոցիալ-տնտեսական միջավայրի ու աշխատանքի կազմակերպման դասական մեթոդների միավորման վրա: Ըստ որում տարածքներում ներդրումների համաչափ տեղաբաշխման հիմքում պետք է դրվեն հետևյալ առանձնահատկությունները.

- բնակչության եկամուտների մակարդակների համահարթում և դրա հիման վրա մարդկանց կենսապայմանների բարելավում, ինչպես նաև սոցիալական հիմնախնդիրների լուծում,
- տարածքներում շրջակա միջավայրի, հոգևոր ու հանգստի պայմանների բարելավում:

6. Ներդրումների տարածքային անհամամասնությունների հաղթահարումը ենթադրում է տարածքային միավորումների (Երևանում՝ վարչական շրջանների) միջև ինտեգրման, կոոպերացման, ռեսուրսային և ֆինանսական հարաբերությունների

կարգավորում, հարկաբյուջետային միջոցառումների կատարելագործում: Այդ նպատակով, անհրաժեշտ է.

- տարածքային միավորումներում ներդրումների տեղաբաշխման անհամաչափության առաջացման պատճառների բացահայտում, անհամաչափ ներդրումների վիճակի գնահատման ցուցանիշների ընտրություն և դրանց կարգավորման եղանակների ձևավորում,
- ներդրումային համակարգի ֆունկցիոնալ գործունեության դերի բարձրացում տարածքային միավորումների զարգացման անհամաչափության հաղթահարման գործընթացում, ինչպես նաև այդ միավորումներին հատկացվող դոտացիաների և օգնության այլ ձևերի ու դրանց տրամադրման տեսողությունների հիմնավորում,
- տարածքներում նորամուծությունների ներդրման համար բարենպաստ ներդրումային միջավայրի ստեղծում, ֆինանսավորման աղբյուրների ընդլայնում, (ֆինանսական) լիզինգի միջոցների օգտագործում, ներդումների նոր միջոցների և արդյունքների ներգրավում,
- տարածքներում ներդրումների ավելացման նպատակով դրանց նոր ուղղությունների համալիր կիրառում:

7. Ներդրումների տեղաբաշխման արդյունավետությունը պետք է դիտարկել կենտրոնացված կարգով բաշխվող ֆինանսական միջոցների (Երևանում՝ քաղաքի բյուջեի) տեսանկյունից՝ դրա իրականացման հիմքում դնելով հարկման օբյեկտի, բազայի, դրույքի առանձնահատկությունները: Այս առումով, անհրաժեշտ է սահմանել տարածքային միավորումների բյուջեներից կատարվող ծախսերի նորմատիվներ՝ ըստ ներդրումների տեղաբաշխման խնդիրների լուծման: Նպատակահարմար է նաև տարածքային միավորումներին հատկացվող դոտացիաների ընդհանուր գումարը հավասարեցնել տարածքային միավորումների բյուջեների նորմատիվային ծախսերի և դրանց հարկային ընդհանուր եկամուտներին:

8. Այս կամ այն տարածքային միավորումներում (Երևանում՝ վարչական շրջաններում) ներդրումների տեղաբաշխման նպատակ պետք է հանդիսանա դրանցում սոցիալ-տնտեսական զարգացման անհամաչափությունների հաղթահարումը, բնակչության զբաղվածության, եկամուտների, ջրամատակարարման, էներգասպասարկման, բնակարանային ապահովագրության, առողջապահական և կրթության ծառայությունների մատչելիության, ճանապարհների, հեռահաղորդակցության հնարավորությունների, կենսամիջավայրի և այլ ցուցանիշների բարելավմամբ: Խոշոր քաղաքների զարգացման և նրա առանձին տարածքային միավորումների զարգացման համար կարևոր են հատկապես ոչ միայն համայնքային, այլ նաև արտաքին ֆինանսական ռեսուրսների և հատկապես մասնավոր ներդրումների ներգրավումը, դրանց օգտագործման արդյունավետության բարձրացումը, ձեռնարկատիրական գործունեության խթանումը և այլն:

Ներդրումների անհամաչափությունների հաղթահարման համար անհրաժեշտ է.

- <<ներդրումային>> ցածր մակարդակ ունեցող տարածքային միավորումների զարգացման համապատասխան պայմանների ապահովում,
- մասնավոր հատվածի գործունեության համար բարենպաստ միջավայրի ապահովում և նրդրումային դաշտի կատարելագործում:

9. Երևան քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացման կայունության և ներդրումների օգտագործման արդյունավետության նպատակայնության ապահովման համար անհրաժեշտ է ստեղծել ներդրումային հիմնադրամ: Վերջինիս նպատակները պետք է լինի աղքատության մակարդակի կրճատման, տարածքների համաչափ զարգացման համար

ֆինանսական միջազգային կառույցների և դոնորների կողմից իրականացվող ծրագրերի համակարգումը: Կարևոր է հստակ սահմանել այդ հիմնադրամի գործառույթները.

- <<մասնավոր հատված – Երևանի վարչական շրջանների>> համագործակցության արդյունքում ներդրումների ընդգրկման միջոցով սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի և միջոցառումների իրականացում ու մասնավոր հատվածի կողմից իրականացվող միջոցառումներին աջակցության ցուցաբերում,
- վարչական շրջանների ֆինանսական և ինստիտուցիոնալ հզորությունների ամրապնդում,
- վարչական շրջանների միջև համագործակցության խթանում:

10. Երևանի քաղաքապետարանի կողմից վարչական շրջաններին որպես աջակցության հիմնական ուղղություններ կարելի է առանձնացնել.

- աջակցություն տարածքներում ստեղծվող փոքր և միջին արտադրություններին և ծառայություններին,
- օժանդակություն մասնագետ կադրերի պատրաստմանն ու նորամուծությունների ներդրմանը,
- մշակող արդյունաբերության և ծառայությունների ոլորտներում փոքր և միջին գործարարության զարգացման խրախուսում:

11. Որպեսզի համայնքների միջոցներն ինքնաբավ լինեն պատվիրակած լիազորությունների շրջանակում, անհրաժեշտ է, որ տեղական ինքնակառավարման մարմինները բացի հողի հարկից, գույքահարկից, տեղական տուրքերից, մասհանումներ ունենան նաև շահութահարկից ու եկամտային հարկից (50%-ի չափով): Ընդհանրապես ճիշտ է, եթե որպես մնացորդային մեծություն ձևավորվի բյուջեն, իսկ որպես սկզբնական մեծություն՝ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեները:

12. Խոշոր քաղաքներում արտադրության բազմազանեցման (դիվերսիֆիկացման) և ծառայությունների մասնագիտացման սկզբունքի համաձայն ձևավորվում է տարածական կենտրոնացման նոր համակարգ այդ ոլորտներում: Համաշխարհային բանկի փորձագետների կարծիքով կա քաղաքների ձևավորման երկու տեսակ՝ դիվերսիֆիկացված և մասնագիտացված: Քաղաքային համակարգերը սովորաբար բաղկացած են մի քանի խոշոր դիվերսիֆիկացված կենտրոններից և ավելի փոքր մասնագիտացած քաղաքներից: Դիվերսիֆիկացված քաղաքները խոշոր կենտրոններ են, որոնք հիմնականում մատուցում են ծառայություններ, բարձր տեխնոլոգիաներ, իրականացնում են գիտական հետազոտություններ, կազմակերպում են ոչ ստանդարտ արդյունաբերական արտադրանքի արտադրություն և հիմնադրում նույնիսկ նոր արտադրական ձեռնարկություններ: Բոլոր այդ ոլորտները օգտվում են ագլոմերացիոն էֆեկտներից, ինչը բնորոշ է խոշոր քաղաքներին: Հողի բարձր վարձավճարը այդքան էլ կարևոր չէ ձեռնարկությունների սպասարկման ոլորտի համար, քանի որ նրանք զբաղեցնում են համեմատաբար փոքր տարածք: Միևնույն ժամանակ, խոշոր քաղաքների որոշ ճյուղերում են կենտրոնացած արդյունաբերական ձեռնարկությունները, որոնք օգտվում են տեղայնացման էֆեկտից (այսինքն՝ օգտվում են հարևանությամբ գտնվող միատարր ձեռնարկություններից), համեմատաբար ավելի էժան արտադրական գործոններից (մասնավորապես, հողի ցածր արժեք և էժան աշխատուժ):

13. Կարելի է եզրակացնել, որ կառավարման մեջ գերակշռում են քաղաքապետարանի առանձին մասնավոր հետաքրքրությունները, ինչի հետևանքով կորչում է լուրջ քաղաքային ամբողջության ռազմավարական հեռանկարը: Այս իրավիճակում վարչական աշխատակազմի դերը բարձրանում է առանցքային հարցերում և մեծանում է բյուրոկրատիայի

ազդեցությունը: Արդյունքում, պարզվում է, որ երկաստիճան քաղաքային համակարգը կոնֆլիկտային է:

Ամենատարածված կառավարման համակարգն այն համակարգն է, որը առաջարկում ենք անվանել «միաստիճան մոդել ապակենտրոնացման տարրերով»: Այս մոդելի շրջանակներում, ներքաղաքային տարածքներում, կան տարբեր աստիճանի անկախության ընտրովի մարմիններ, բայց նրանք չեն ձևավորվել ըստ առանձին համայնքների (Երևանում՝ վարչական շրջանների): Քաղաքապետարանին բնորոշ գործառույթներ և կարգավիճակ ունի միայն միասնական համակարգի կառավարումը ամբողջ քաղաքի տարածքում: Քաղաքի ներսում համայնքային տարածքների (Երևանում՝ վարչական շրջանների) սահմաններում դրանց իրական ինքնուրույնությունը կարող է զգալիորեն տարբերվել:

Քաղաքի կառավարման երկաստիճան համակարգի աշխատանքի կազմակերպման բարձր կոնֆլիկտայնությունը և անթափանցիկությունը ստիպեցին հրաժարվել նման մոդելից և ի հայտ եկան խնդիրների լուծման նոր ճանապարհների որոնման հնարավորություններ: Պետական գույքի լայնամասշտաբ ապապետականացման (սեփականաշնորհման) շրջանակներում ապապետականացվեցին ընկերությունների ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների կառավարումը: Մասնավոր հատվածի ներգրավումը քաղաքային ծառայությունների հարցում չսահմանափակվեց միայն ենթակառուցվածքային ոլորտներով:

14. Եթե ներդրումային մթնոլորտը երկրում անբարենպաստ է, ապա բարձրանում է ներդրումային ռիսկը: Այն երկրները կամ քաղաքները որոնք ներդրումների կարիք ունեն պետք է իրականացնեն զգալի ծախսեր օտարերկրյա կապիտալի ներգրավման համար, քան այն երկրները որոնք ունեն բարենպաստ ներդրումային միջավայր:

Ներդրումային գործունեությունը խոչընդոտող գործոնները (անբարենպաստ ներդրումային միջավայրը), ներառում է.

- ✓ երկրում քաղաքական անկայունությունը,
- ✓ սոցիալական լարվածությունը (էթնիկ և կրոնական անկարգությունները, գործադուլները, կոռուպցիայի մակարդակը, կազմակերպված հանցագործ խմբերի առկայությունը, բյուրոկրատիան, կյանքի որակի նվազեցումը հասարակության մեծամասնության մոտ և այլն),
- ✓ բարենպաստ ներդրումային միջավայրի համար առանձնահատուկ տեղ է զբաղեցնում սոցիալ-տնտեսական զարգացման կայունության մակարդակը: Բազմաթիվ երկրներում իրավական ակտերի անկատարությունը և դրանց հաճախակի փոփոխությունները խոչընդոտում են ներդրումային գործընթացը կամ վատացնում են դրանց իրականացման պայմանները:

Ամփոփելով Երևան քաղաքի համար կատարված հաշվարկները կարող ենք փաստել, որ

- ✓ Երևան քաղաքի տնտեսության առանձին ոլորտներ (արդյունաբերություն, շինարարություն, ծառայությունների ոլորտ և արտահանման տեմպեր) ունեն աճի առաջանցիկ տեմպեր ՀՀ տնտեսության նկատմամբ,
- ✓ Երևան քաղաքի տնտեսության ոլորտների միջև եղած կոոպերացման աստիճանն ավելի բարձր է, քան ՀՀ-ում: Հաշվարկային գործակիցների գումարային արդյունքը Երևան քաղաքի համար ավելի մեծ է, քան ՀՀ տնտեսության համար: Մյուս կողմից առանձին ոլորտների միջև եղած կապը բնութագրող մոդելների հաշվարկային գործակիցների մեծությունը Երևան քաղաքի համար ավելի մեծ է քան ՀՀ տնտեսության համար:

✓ Երևան քաղաքը ներդրումների ներգրավման տեսանկյունից ավելի գրավիչ է, քան ամբողջ ՀՀ տնտեսությունը: Համադրելով այն փաստը, որ տնտեսության որոշ ոլորտներ Երևան քաղաքում ավելի առաջանցիկ տեմպերով են աճում, քան ՀՀ տնտեսության դեպքում, մյուս կողմից հաշվի առնելով այն հանգամանքը, որ Երևան քաղաքում կոոպերացման մակարդակն ավելի բարձր է քան ՀՀ տնտեսության դեպքում, պետք է փաստենք, որ ներդրողի տեսանկյունից ավելացված արժեք ստեղծելու և ներդրումներից մեծ եկամուտ ստեղծելու առումով Երևան քաղաքը շատ ավելի գրավիչ է:

15. Ներկայումս գերակշռում է այն միտքը, որ քաղաքը պետք է լինի գրավիչ՝ երիտասարդների, կրթված մարդկանց, գործարարների, մտավորականների համար և զարգացման շեշտադրումը պետք է հենվի երիտասարդ մարդկանց վրա, ովքեր ունեն մարդկային կապիտալի բարձր մակարդակ: Հենց այսպես է հասկացվում «ստեղծագործ դաս» հասկացությունը նաև Հայաստանում: Սակայն, հայկական իրականությունում կա մեկ հիմնական բացառություն այս կանոնից: Դա այն է, որ անկախ գործնական քաղաքականության արմատական ազդեցությանից, քաղաքային հարմարավետության կարևորությունը այս կամ այն հասկացության ձևով Հայաստանում համարում են «ստեղծագործ դաս», այն դիտվում է որպես աքսիոմա և, փաստորեն, չի դառնում գիտական ուսումնասիրության թեմա: Թվում է, թե այս թեզը պետք է դիտվի որպես վարկած, ինչը կարող է հաստատվել կամ հերքվել իրական վերլուծության դրդապատճառների և երիտասարդ մարդկանց կյանքի ռազմավարության հիման վրա, ովքեր ունեն մարդկային կապիտալի բարձր մակարդակ:

16. Երևանում տնտեսության վրա ներդրումների ազդեցության գնահատումը հանգեցնում է այն եզրահանգմանը, որ քաղաքի ՀՆԱ-ի 3-8% աճ ապահովելու համար 2015-2020թթ. համար անհրաժեշտ է լրացուցիչ ներգրավել 303.5-318.2 մլն ԱՄՆ դոլար ներդրում, իսկ քաղաքի ՀՆԱ-ն ներկայիս մակարդակի վրա պահելու համար անհրաժեշտ է առնվազն 600-700 մլն ԱՄՆ դոլար ներդրում:

Երևան քաղաքի ՀՆԱ-ն, եթե 2015-2020թթ.-ի ընթացքում աճի տարեկան 3-8%-ով, ապա գործազրկության մակարդակը դիտարկվող ժամանակահատվածում կնվազի՝ հասնելով համապատասխանաբար 9.53-12.01%-ի մակարդակի:

Հետազոտության հիմնական արդյունքներն արտացոլված են հրատարակված հետևյալ գիտական հոդվածներում.

1. <<Քաղաքի ներդրումային գրավչությունը և գնահատման մեթոդները>>, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները և առաջնահերթությունները: Գիտաժողովի նյութերի ժողովածու/ խմբ. խորհուրդ.- Եր.: Եվրասիա միջազգային համալսարան, Գիրք 4, 2014թ., էջ 224-232:

2. <<Երևան քաղաքի ՀՆԱ-ի հաշվարկման մեթոդաբանությունը և գնահատումը>>, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները և առաջնահերթությունները: Գիտաժողովի նյութերի ժողովածու / խմբ. խորհուրդ.- Եր.: Եվրասիա միջազգային համալսարան, Գիրք 4, 2014թ., էջ 233-237:

3. <<Քաղաքի կառավարման արդյունավետության բարձրացման ուղիները>>, ՃՇՀԱՀ գիտական աշխատություններ, 2015թ., հատոր 2, էջ 3-9:

4. <<Քաղաքային ներդրումային գրավչությունը որպես մրցունակային գործոն>>, ՃՇՀԱՀ գիտական աշխատություններ, 2015թ., հատոր 2, էջ 99-103:

АРА АЛЬФРЕДОВИЧ САДОЯН

ТЕРРИТОРИАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ ПРИВЛЕЧЕНИЯ ИНВЕСТИЦИЙ

(НА ПРИМЕРЕ ГОРОДА ЕРЕВАНА)

Диссертация на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 – “Экономика, управление хозяйством и его отраслями”.

Защита диссертации состоится 4 декабря 2015г. в 15^{00}, на заседании Специализированного совета 015 по экономике ВАК Республики Армения, действующего в Ереванском государственном университете, по адресу: 0009, г. Ереван, ул. Х.Абовяна 52.

Р Е З Ю М Е

В период первого десятилетия 21-ого века важность роста человеческого капитала, конкурентоспособность городов и повышение ее уровня стали главной темой региональных аспектов экономического развития. В цивилизованном мире почти повсеместно считается, что конкурентоспособность регионов (в широком смысле этого понятия), особенно в крупных городах, играет важную роль в формировании стабильной социально-экономической динамики страны, что достигается путем придания значимости квалифицированным человеческим ресурсам в современной экономике и управления ими. Конкурентоспособность городов в основном связана с инвестиционной привлекательностью данного города, а также от тех предпосылок и потенциала, которые обеспечиваются в нем, а для воплощения в жизнь данных механизмов нужны «творческие» идеи.

Основная цель диссертации - анализ инвестиционного потенциала Еревана и предложение комплексных мер по повышению привлекательности инвестиций, а также эффективному распределению инвестиций между отдельными сферами деятельности города.

Для достижения поставленной цели были сформулированы следующие задачи:

- показать роль внедрения инвестиций в процессе устойчивого социально-экономического развития;
- исследовать инвестиционное состояние и экономическую политику РА;
- изучить региональные факторы и препятствия, влияющие на инвестиции;
- проанализировать состояние макроэкономических и инвестиционных потоков в крупных городах до глобального экономического кризиса (2008 г.) и в посткризисный период;
- провести комплексный анализ методов оценки инвестиционной привлекательности города;
- оценить уровень инвестиционной привлекательности города Еревана;
- представить инвестиционную привлекательность города как фактор его конкурентоспособности;
- исследовать основные планы развития города Еревана и направления бюджетных расходов;
- представить критерии "творческого" города;
- исследовать государственные и общинные аспекты улучшения инвестиционной среды;
- рассчитать и оценить ВВП города Еревана;

- смоделировать процесс эффективного перераспределения инвестиций и оценить их величины при различных сценариях развития.

Основные научные результаты работы имеют теоретическое и практическое значение, а их научная новизна состоит в следующем:

- на основе количественной оценки социально-экономического развития города Еревана разработан новый механизм оценки инвестиционной привлекательности города, который использовался для г. Еревана, а инвестиционная среда рассматривается как фактор конкурентоспособности;
- разработаны три расчетных сценария ВВП города Еревана – пессимистический, реалистический и оптимистический, на основе которых рассчитан ВВП г. Еревана, а также наибольшая величина ВВП в нынешних экономических условиях;
- с использованием эконометрических моделей оценена текущая инвестиционная политика РА, на основе которой разработаны количественные подходы влияния инвестиций на экономику города в случае развития различных сценариев, для достижения максимального уровня ВВП г. Еревана;
- оценены размеры уменьшения уровня безработицы в городе Ереване при развитии различных инвестиционных сценариев вплоть до 2020 года.

ARA ALFRED SADOYAN

REGIONAL PROBLEMS OF ATTRACTING INVESTMENTS

(CASE STUDY OF YEREVAN CITY)

The dissertation is submitted for the pursuing of scientific degree of PhD of economic in the field 08.00.02 “Economics, Management of the Economy and its Branches”

The defense of the dissertation will take place at 15 ^{00} of December 4th, 2015 at the Meeting of the Specialized Council 015 in Economics of the Supreme Certifying Committee of the Republic of Armenia acting at the Yerevan State University.

Address: 52 Abovyan str., Yerevan, 0009, Armenia

S U M M A R Y

During the first decade of the 21st century, the value of the growth of human capital, competitiveness of cities and increasing of its level became the main theme of the regional aspects of economic development. In the civilized world almost everywhere considered that the regional (global) competitiveness, especially in large cities is significant in the formation of stable social and economic dynamics of the country, due to the sharp-set and work of qualified human resources in the modern economy. The competitiveness of the city is mainly associated with the investment attractiveness of the city as well as those assumptions and the potential that it provides, and for the realization of their mechanisms are needed "creative" ideas.

The main purpose of the dissertation is the analysis of investment potential of the city of Yerevan and suggestion of comprehensive measures to enhance the attractiveness of investment and offer efficient allocation of investments between specific areas of the city.

To achieve this goal the following objectives have been formulated:

- To suggest the role of investment in the implementation of sustainable socio-economic development,
- To explore the state investment and economic policies of the RA,
- To explore regional factors and obstacles affecting investment,
- To analyze the state of macroeconomic and investment flows in the major cities before the global economic crisis (2008) and in the post-crisis situation,
- To conduct a comprehensive analysis of the methods of evaluation of investment attractiveness of the city of Yerevan,
- To evaluate the level of investment attractiveness of Yerevan
- To present the investment attractiveness of the city as a factor of competitiveness,
- To explore the major plans of the development of Yerevan and the direction of budgetary expenses,
- To present the "creative" standards of the city,
- To explore national and regional aspects of the improvement of the investment environment,

- To asses and evaluate the GDP of Yerevan,
- To simulate the process of efficient reallocation of investments and assess their values based on different development scenarios.

The main scientific results of the dissertation have theoretical and practical significance, and their scientific innovation is as follows:

- Based on quantitative assessment of the socio-economic development of Yerevan, a new mechanism for assessing the investment attractiveness of the city have been developed which was used for the city of Yerevan and the investment environment is considered as a factor of competitiveness;
- 3 estimated scenarios of GDP are developed – pessimistic, optimistic and current providing the assessment of the GDP of Yerevan, as well as the highest value of GDP in the current economic environment;
- Using econometric models, current investment policy is evaluated, based on which quantitative approaches have been developed in case of various scenarios to ensure a maximum level of GDP in Yerevan;
- Also estimated the size of reduction in the unemployment rate in Yerevan in the development of various investment scenarios up to 2020.